ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594015

Էլ. փոստ sirvard.gevorgyan@justice.am

N//9993-2022

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր կողմից 2021 թվականի մարտի 4-ին ներկայացված թիվ հ.516913 գրության (այսուհետ՝ Գրություն)՝ հայտնում եմ հետևյալը.

1. Առաջին հարցադրման առնչությամբ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի»-ի գնահատման 2-րդ փուլի շրջանակում կազմված ինքնագնահատման ստուգաթերթի հասանելի է միայն անգլերեն լեզվով հետևյալ հղմամբ՝
https://www.moj.am/storage/uploads/00.UNCAC_IRM_2nd_circle.pdf:

Միաժամանակ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի»-ի գնահատման 1-ին փուլի շրջանակում կազմված ինքնագնահատման ստուգաթերթի վերաբերյալ տեղեկությունները չեն պահպանվել:

2. ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի»-ի կատարման գնահատման 2-րդ փուլը դեռևս չի ավարտվել, ամբողջական զեկույցը մշակման փուլում է:

3. Երրորդ հարցադրման առնչությամբ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետություն ժամանած ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի քարտուղարության ներկայացուցիչները և Սերբիայի գնահատող փորձագետները ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի գնահատման երկրորդ փուլի

աշխատանքային քննարկումների շրջանակում 2019 թվականի հուլիսի 16-18-ը հանդիպել են Հայաստանի Հանրապետության շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպումներին շահագրգիռ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներից մասնակցել են հետևյալ անձինք՝

- Հովհաննես Հովհաննիսյան - Հանրային Խորհուրդ,
- Մարատ Ատովմյան- Հանրային խորհուրդ, Իրավաբանների հայկական ասոցիացիա,
- Արմեն Եզեկյան– Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի վարիչ,
- Էդուարդ Կիրակոսյան - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն,
- Գայանե Մամիկոնյան - Բաց հասարակության հիմնադրամներ,
- Սոնա Այվազյան– Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն,
- Վարուժան Հոկտանյան - Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն:

Երրորդ հարցադրման առնչությամբ հարկ է նաև հավելել, որ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի գնահատման 2-րդ փուլին մասնակցել են ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, այլընտրանքային զեկույցներ կազմվել են Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հակակոռուպցիոն կոալիցիայի, Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից, որոնք հասանելի են հետևյալ հղումներով՝

https://uncaccoalition.org/wp-content/uploads/Final-Civil-Society-Report-Armenia-ALA-UNCAC-Coalition-Arm-Final-29032021-komprimiert.pdf,

https://uncaccoalition.org/wp-content/uploads/Final-Civil-Society-Report-Armenia-ALA-UNCAC-Coalition-15.3.2021.pdf,

https://transparency.am/files/publications/1563387096-0-397125.pdf?v=4,

https://uncaccoalition.org/new-civil-society-report-on-armenia-better-monitoring-and-a-more-robust-asset-recovery-framework-needed-to-advance-anti-corruption-efforts/:

ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի գնահատման առաջին փուլի վերաբերյալ Գրության 3-րդ հարցադրմամբ պահանջված տեղեկությունները չեն պահպանվել:

4. ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի»-ի կատարման գնահատման 2-րդ փուլը դեռևս շարունակվում է, 2021 թվականի նոյեմբերին դիրքորոշում է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի»-ի կատարման գնահատման 2-րդ փուլի զեկույցի նախագծի՝ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» 5-րդ գլխի գնահատման վերաբերյալ: Միևնույն ժամանակ 2021 թվականի հունիսի 14-ին հրապարակվել է Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» գնահատման 2-րդ փուլի գործադիր ամփոփումը, որը հասանելի է միայն անգլերեն լեզվով հետևյալ հղմամբ՝ https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056_E.pdf:

5. Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի»-ի կատարման գնահատման 2-րդ փուլի գնահատման համակարգող անձը Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ Քրիստինե Գաբուզյանն է (հեռ. +37410 59 40 22, էլ. փոստ՝ kristine.gabuzyan@moj.am):

6. Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի»-ի գնահատման 1-ին և 2-րդ փուլերի շրջանակներում բարձրացված խնդիրները հաշվի են առնվել և դրանց լուծմանն ուղղված մի շարք միջոցառումներ են նախատեսվել Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշմամբ հաստատված հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով:

Recoverable Signature

X

Sirvard Gevorgyan

Signed by: GEVORGYAN SIRVARD 6804830105

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Հասմիկ Տիգրանյան
ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականության
մշակման և մոնիթորինգի վարչություն